

# ՏԱՐՏԱՆԵԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ Կ'ՈԳԵԿՈՉՈՒԻ 24 ԱՊՐԻԼԻՆ

*Posted on February 6, 2015 by Keghart*



Category: [Opinions](#)



## **Օշին Էլակեօզ,** Իսթանպուլ, 23 Յունուար 2015

Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Էրտողան անցեալ տարի, Թուրքիոյ վարչապետի պաշտօնով, 24 Ապրիլին օր մը առաջ, երբ բոլոր աշխարհի Հայութիւնը եւ Թուրքիա կը սպասէին ԱՄՆ ի Նախագայ Օպամայի 1915-ի դէպքերու մասին ընելիք ուղերձը, շատ մեծ անակնկալ մը ընելով յայտարարութիւն մը ըրաւ, որուն մէջ ան ցաւակցութիւն կը յայտնէր Հայերուն 24 Ապրիլ 1915-ի զոհերու առնչութեամբ:

Էրտողանի այս յայտարարութիւնը ռումբի ազդեցութիւն գործեց ո՛չ միայն Թուրքիոյ, այլ համայն աշխարհի վրայ եւ անմիջապէս սկսան հրապարակ իջնել թեր ու դեմ յայտարարութիւններ, թե՛ սփիւռքահայ եւ թե՛ տեղական թերթերուն մէջ:

## **Օշին Էլակեօզ,** Իսթանպուլ, 23 Յունուար 2015

Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Էրտողան անցեալ տարի, Թուրքիոյ վարչապետի պաշտօնով, 24 Ապրիլին օր մը առաջ, երբ բոլոր աշխարհի Հայութիւնը եւ Թուրքիա կը սպասէին ԱՄՆ ի Նախագայ Օպամայի 1915-ի դէպքերու մասին ընելիք ուղերձը, շատ մեծ անակնկալ մը ընելով յայտարարութիւն մը ըրաւ, որուն մէջ ան ցաւակցութիւն կը յայտնէր Հայերուն 24 Ապրիլ 1915-ի զոհերու առնչութեամբ:

Էրտողանի այս յայտարարութիւնը ռումբի ազդեցութիւն գործեց ո՛չ միայն Թուրքիոյ, այլ համայն աշխարհի վրայ եւ անմիջապէս սկսան հրապարակ իջնել թեր ու դեմ յայտարարութիւններ, թե՛ սփիւռքահայ եւ թե՛ տեղական թերթերուն մէջ:

Ես ալ իմ կարգին [յօդուած մը](#) գրելով գնահատած էի Էրտողանի այս որոշումը, դիտել տալով թէ հանրապետութեան շրջանի 91 տարիներու տեւողութեան առաջին անգամ Էր որ թուրք վարչապետ մը այսպէս յայտարարութիւն մը, ցաւակցագիր մը կ'ուղղէր Հայերուն 1915-ի առնչութեամբ:

Միաժամանակ ընդգծած էի թէ, իր յայտարարութեան մէջ արտասանած որոշ Նախադասութիւնները խիստ կարեւորութիւն ունէին մեզի համար, որովհետեւ անոնք մինչեւ հիմա 1915-ի դէպքերու կապակցութեամբ յայտարարուած պետական պաշտօնական տեղեկագիրը բոլորովին տակնուվրայ ընելով նոր շրջան մը կը բանային:

Գրութիւնս վերջացուցած էի շեշտելով թէ այս ուղերձը իր կարեւորութիւնը կը կորսնցնէր, եթէ միայն ուղերձ ըլլալով մնար, այլ պետք է արժեքաւորուէր այս ուղղութեամբ առնուելիք դրական քայլերով ու նոր որոշումներով:

Այս տարի Էրտողան դարձեալ առաւ անակնկալ որոշում մը , որ զինք բոլորովին հակասութեան մէջ կը դնէր իր անցեալ տարի ըրած յայտարարութեան հետ: Էրտողանի որոշումով առաջին աշխարհամարտի կարեւոր ճակատամարտերէն մէկը եղող

Տարտանելի մարտի ոգեկոչումները, որ ամբողջ 91 տարիներ շարունակ 18 Մարտ թուականին յիշատակուած էին , այս տարի պիտի ոգեկոչուէին ճիշտ Ապրիլ 24-ին, կարծեք թէ տարուայ միւս 364 օրերուն բոլորն ալ լեցուն ըլլային այլ ոգեկոչումներով:

Երտողան ասկէ զատ հարիւրէ աւելի երկիրներու կառավարիչներ հրաւիրեց Թուրքիա, որպէսզի մասնակցին ոգեկոչումներուն: Կասկած չկայ թէ Երտողան իր այս դիւանագիտական խորամանկութեամբ կը ցանկայ ստուերել Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչումները եւ տկարացնել անոնց ազդեցութիւնը:

Տեսնենք թէ Երտողան ինչպէս հակասութեան մէջ ինկաւ իր անցեալ տարուայ ըրած յայտարարութեան հետ: Բաղդատենք իր այս տարուայ որոշումը իր անցեալ տարի ըրած յայտարարութեան մէջ գտնուող որոշ նախադասութիւններուն հետ, որոնք այդ յայտարարութեան կարեւոր կետերն էին:

- Անցեալ տարի Երտողան ըսած էր թէ. **«Հայեր իրաւունք ունէին իրենց վիշտը ազատօրէն ոգեկոչելու, իսկ անոնց մասնակցիլ մարդկային պարտականութիւն մըն էր»:** Իսկ այս տարի իր ընդունած որոշումով **Հայերուն ձեռքէն կը խլէր իրենց վիշտը ազատօրէն ոգեկոչելու իրաւունքը, որովհետեւ 24 Ապրիլի ոգեկոչման նոյն օրը այլընտրական ոգեկոչում մը հնարելով արգելք հանդիսանալ կը ջանար ուրիշներուն՝ անոնց մասնակցութիւն բերելու մարդկային պարտականութեան:**

- Անցեալ տարի ան ըսած էր. **«24 Ապրիլը բոլոր Հայերու համար յատուկ նշանակութիւն մը ունէր»:** Իսկ այս տարուայ որոշումով ան **ուղղակի ստուերել կը ջանար 24 Ապրիլը, որ մասնայատուկ նշանակութիւն ունի Հայերուն համար:**

- Իր անցեալ տարուայ յայտարարութեան մէջ Երտողան ըսած էր. **«Այս հողերու վրայ ապրող ժողովուրդներուն պատմութեան մէջ կրած տառապանքները իրարու հետ բաղդատել կամ զանոնք իրարու հետ մրցակցեցնել սխալ վարուելակերպ է»:** Իսկ այս տարի ան **բոլորովին մրցակցութիւն կը բերէր 1915-ին զոհուած քաղաքային անգէն ժողովուրդին կրած տառապանքներուն եւ Տարտանելի պատերազմի ընթացքին Թուրք եւ օտարազգի զինուորներու պատերազմի ընթացքին կրած տառապանքներու միջեւ:**

- Ան իր անցեալ տարուայ յայտարարութեան մէջ ըսած էր դարձեալ. **«Նոյնիսկ հակառակ գաղափարները ընդունելի ու գնահատելի են եւ անոնք երկրին ժողովրդավարութեան զարգացման համար մեծ կարեւորութիւն ունին»:**

Իսկ այս տարի նոյն Երտողանը, **պետութեան պաշտօնական տեղեկագրին ներհակ գաղափարներ կը յայտարարէր, ի վնաս երկրի ժողովրդավարութեան զարգացման:**

Երտողան իր անցեալ տարուայ ուղերձով, որուն մէջ ցաւակցութիւն կը յայտնէր Հայ ազգին իր պապերուն կրած տառապանքներուն համար, 1915-ի բանավէճին մէջ մերձեցման նոր դուռ մը կը բանար: Իսկ իր այս տարուայ դիւանագիտական որոշումով նախագահը բոլորովին կը բակէ այդ դուռը եւ վերջակէտ կը դնէ նոր մերձեցումներու

## Կարելիութեան բոլոր յոյսերուն:

